



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»**  
**ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

« 01 » հունիսի 2021թ. 70-Ձ.

ք. Երևան

**«ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ**  
**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԿՈՂՄԻՅ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՍՏՈՒԳԱԶԱՓՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ**  
**ՀԱՄԱՐ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ և ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ**  
**ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 25-Ի N44-Ն**  
**ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՕ-22-Ն ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի դրույթով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Ստուգաչափման ներկայացնելու համար իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին իրազեկման համակարգի ներդրման վերաբերյալ» 2019 թվականի նոյեմբերի 25-ի N44-Ն հրամանում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Փոփոխել «Ստուգաչափման ներկայացնելու համար իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին իրազեկման համակարգի ներդրման վերաբերյալ» 2019 թվականի նոյեմբերի 25-ի N44-Ն հրամանը և սահմանել հետևյալ խմբագրությամբ.

2. Չափման միջոցների ստուգաչափում իրականացնող ստորաբաժանումների ղեկավարներին.

- ծանուցել իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին չափման միջոցները սահմանված կարգով ստուգաչափման ներկայացնելու մասին, չափման միջոցի ստուգաչափման վկայականի գործողության ժամկետի ավարտից 30 օր առաջ, համաձայն Հավելված 1-ի,

- ստորաբաժանումներում նշանակել պատասխանատու՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին ծանուցելու չափման միջոցները սահմանված կարգով ստուգաչափման ներկայացնելու համար, համաձայն Հավելված 2-ի:

1. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ տնօրենի տեղակալներին ըստ իրենց համակարգման ոլորտների:

**ՏՆՕՐԵՆ**

**ՓԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝**

**ԱԼԲԵՐՏ ԲԱՐԱՅԱՆ**

---

---

---

**Հարգելի գործընկեր**

Ծանուցում ենք Ձեզ, որ Ձեր կազմակերպությանը պատկանող Օրենսդրական չափագիտության ենթակա ոլորտներում կիրառվող \_\_\_\_\_ ստուգաչափման ժամկետը լրանում է \_\_\_\_\_:

Տեղեկացնում ենք, որ, Հիմք ընդունելով «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության 22 առ 08.20.2012թ Օրենքի 16-րդ հոդվածի 1,7,10-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափման միջոցները ենթակա են ստուգաչափման: Չափման միջոց կիրառող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են իրենց կողմից առևտրային նպատակներով կիրառվող Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափման միջոցները ենթարկել ստուգաչափման:

Օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չստուգաչափված չափման միջոցների շահագործումն արգելվում է: Չստուգաչափված Չափման միջոցի շահագործումն ըստ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքի. առաջացնում է վարչական պատասխանատվություն. (22 առ 08.20.2012թ. ՀՕ Գլուխ 6 Հոդված 25՝ Սույն օրենքի դրույթները խախտող անձինք կրում են պատասխանատվություն ՀՀ օրենքներով սահմանված կարգով):

**Ստուգաչափում իրականացվում է միայն՝**

- Ձեր կողմից ուղարկված ստուգաչափման հայտի հիման վրա*
- Քաղաքապետական անկանխիկ եղանակով կատարված վճարումից հետո՝ 10օրյա ժամկետում*
- Վկայագրված մասնագետների կողմից*
- Վկայագրված չափանմուշներով*

Կասկածելի դեպքերում խնդրում ենք տեղեկացնել մեզ 011232600 թեժ գիծ կամ դիմել իրավապահ մարմիններին:

ՉՍ ստուգաչափումն իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվ իրավական ակտերի, ստուգաչափման մեթոդիկաների հիման վրա: Մանրամասները՝ <http://metrology.am/hy/offers/chm-stougachapoum.html> կայքում:

Հարգանքով,  
«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ  
ք. Երևան 0051, Կոմիտասի 49/4  
info@metrology.am  
www.metrology.am  
Հեռ. (+347 10)232600(134)